պարագայում եզրահանգում է, որ վերոգրյալ ապացույցներով հիմնավորվում է թիվ ԱՐՔԱԿՍ-ԳՀԾՁԲ-22/01 գնման պայմանագիրը միակողմանի լուծելու գործողության հիմքում ընկած հանգամանքների, այն է՝ «Վանդաժի» ՍՊ ընկերության կողմից 2022թ. հունիսի 27-ին կնքված թիվ ԱՐՔԱԿՍ-ԳՀԾՁԲ-22/01 գնման պայմանագրի էական խախտումներ թույլ տված լինելու, առկայության փաստը:

Այսպիսով, Դատարանը փաստում է, որ թիվ ԱՐՔԱԿՍ-ԳՀԾՁԲ-22/01 գնման պայմանագիրը միակողմանի լուծելու համար անհրաժեշտ հիմքերն առկա են եղել, հետևաբար՝ ՀՀ Արարատի մարզի «Արտաշատ-Կոմունալ սպասարկում» ՀՈԱԿ-ի կողմից Պայմանագրի միակողմանի լուծումը եղել է վավեր գործողություն:

Ամփոփելով՝ Դատարանը եզրահանգում է, որ հայցն անհիմն է և ենթակա է մերժման:

<u>Դատական ծախսերի բաշխման հարցը</u>

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101 հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ հայցն ամբողջությամբ ենթակա է մերժման, իսկ Հայցվորի կողմից նախապես 30,000.00 ՀՀ դրամի չափով վճարվել է պետական տուրքի գումարը, Դատարանը եզրահանգում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191, 192 և 234.12 հոդվածներով, Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

«Վանդաժի» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ Արարատի մարզի «Արտաշատ-Կոմունալ սպասարկում» ՀՈԱԿ-ի՝ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակելու օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

<u>Ծանոթություն</u>: վճիռը մտել է օրինական ուժի մեջ

«__» _____ 2022թ.:

ԴԱՏԱՎՈՐ՝ Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ